



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



# ԵՐԱԶ ՕՐԵՐ

ԻՄ ԱՍՏԻԾԱՆԵՐՈՒՄ  
ՎԵՐՋԼՈՅՍ ԷՐ  
ՄԵՌԱԾ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ



Գ Ր Ե Ց

**Ս Ա Գ Ո Մ Ո Ւ Ի Ե Չ Ա Տ Ր Ե Ա Ն**

Ե Ր Ե Ի Ա Ն

Տպարան ԵՄՍՏՐԵՆԻՔԻ: Ապստոլիկան փող. N 60.  
1920 թ.



ԱԳՔ

3

Հ. Կ. Երևան

"Պատկերասրահ" Կոմիտասի

5-3-9200

Պատկերասրահ

106

# ԵՐԱԶ ՕՐԵՐ

**ԻՄ ԱՍՏԻՇԱՆԵՐՈՒՄ  
ԿԵՐՋԼՈՅՍ  
ՄԵՌԱԾ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ**

875



Գ Ր Ե Ց

**Ս Ա Ղ Ո Մ Ր ՈՒ Խ Ա Շ Ա Տ Ր Ե Ա Ն**

Ե Ր Ե Դ Ա Ն

արամի, ՀԱՅՐԵՆԻԹԻ Ազատութեան փող. № 60

1920 թ.

106-492

106-492

106-492

106-492

106-492



106-492



206

Ի յիշատակ իմ անմտանալի նահատակ ընկեր  
Արտասազդ Քումանեա 171

Սիրելի Արտիկ, քեզ սիրող և այժմ միայն քու  
քաղցր յիշատակներովդ ասլրող սա արիւնտան  
սիրտը՝ չը գիտէ թէ ուր մնաց քու պաշտելի  
դիակը, բայց գիտէ որ հողիտ, որ ունէր այն-  
քան ազուր թեք հիմա անոնցմով թռչքներ  
կը կատարէ անսահման կապոյտին մէջ մուրաակէ  
— մուրաակ աստղեր է— աստղ երազած աշ-  
խարհներդ փնտռելու:

Որոնիր իմ սիրելի Արտիկ, որոնիր և ինձ  
ալ կանչէ. քու կարօտը քու մտերիմ ընկերներ-  
ուտ սիրտը կը մաշէ, գուն իմ անմտանալի Ար-  
տիկ, ամեն օր մեր յիշողութեան մէջն էս, այդ  
յիշողութիւնները մեզմէ կը խլեն յորդապատ  
արջունքներ. և՛ բը պիտի ըլլայ այն օրը որ հոտ  
հողիներու աշխարհին մէջ, մեր հողինեք գիր-  
կընդխառնելն ու այ երբէ՛ք չի բաժնուին:

Հանգիստ ոսկորներիդ ու քաղցր վայելքը՝  
անուշ հողիիտ:

Յիշատակներովդ ասլրող քո՝ ՍՈՂՈՄՈՅ





# ԻՍ ԱՍՏԻԱԾՆԵՐՈՒՍ

Ամոք...

Նայեցէ՛ք ինձի, ծուռնկի եմ չոքեր, ո՛վ իմ  
իդէալներուս, հողիիս, սէրիս. վշտերուս և տա-  
ռապանքներուս առաւածներ, Ձեզի որ ճանչցայ,  
Ձեզի որ պաշտեցի, Ձեզի որ սաղմոսներուս  
հետ սիրերգներս երգեցի տաճարիս մէջ. հիմա  
լսէք իմ վերջին ողբախառն հեկեկանքներս:

Հոս, տաճարիս . . . մէջ, մեռած սիրտս  
կեանք առաւ, ամոք հետ մէկտեղ մեծ սէր մը,  
սէր մը բիւրեղային, մաքուր, զուլած. հողիիս  
երանգներէն քամւած, ամոք յոյզերէն սնւած:

Ո՛վ առաւածներս, դուք կեանք աւիք այդ  
սէրիս, բայց անիկա որք թողիք իր կանձա-  
քուրի մէջ. նա ճշաց, նա ողբաց, նա երգեց  
մամուլի մը անկեղծութեամբ, բայց ոչ մէկ  
արձագանք չգտաւ, ինքն իրմով մեծցաւ և  
այժմ մահւան ճանկերուն մէջ կը գալարուի, իսկ  
անիկա, որին դրեք տաճարիս վերևը, ինձի  
բախտ սրտիս մէջ ծնած սէրը ամորձ է . . .  
երգէ, երգեցուց երգը ամոք համար... բաց

սիրարդ տաճարից գոներուն պէս անոր տաաչի  
 Անիկա . . . զգարչներու մէջ ծածկւած պիտի  
 դայ Սէգայի մը պէս շոյելու մազերդ համ-  
 բոյրի մը դրոշմով, խոշոր սևուկ աղւոր աշ-  
 քերով, քնքուշ ձայնով քեզի պիտի բռնէ:

«Կեցի՛ր, տառապանքի տղայ, կեցի՛ր, վշտ  
 ծնունդ, տէ՛ս՝ անշնդ ծովն է փոթորկոտ ու  
 յուզւող Կեցի՛ր, ուր կերթաս, անտէր... այիթ-  
 ներն են... որ կը վազեն խելացնոր անծանօթ  
 աշխարհները անգունողին: Կեցի՛ր, քու ասուած-  
 ներդ ինձի զրկեր են քեզի համար: Տե՛ս, այս  
 կուրծքիս տակ հանդչող սիրտը քուկա է: Սիրտ  
 ըն է սա ասանց մտի, տաանց երակի, մտի  
 տեղ գգացունենքու է, երակներու տեղ հօգիթս  
 թրթռուններն են: Սիրտս բաժակ մէ անխար-  
 գախ սիրոյ, առ և խմիր, անիկա քուկա է և  
 քուկա պիտի ըլլայ:»

Ըսի՛ք, որ այժպէս պիտի խօսէր անիկա  
 ինձի, ի՞նչ իմ ասուածներս, բայց ըսէ՛ք, ուր է,  
 նա, չէ՞ որ անիկա եկաւ երազի մը պէս ու  
 անցաւ քամիներէն քշւող ամպերուն նման, չէ՞  
 որ անոր սիրտը եւ գիտէ գգալ եւ գիտէ չգգալ,  
 չէ՞ որ անիկա գիտէ և լայ և չիլայ, չէ՞ որ անի-  
 կա գիտէ եւ խօսիլ եւ դառնայ Մթինքս՝ քիչ

յոյս տւող, շատ աստուածացնաց՝ վշտի ու աստա-  
 պանքի աշխարհներուն մէջ չէ որ անիկա գիտէ  
 և շինել տաճարներ և քանդել, չէ որ անիկա  
 գիտէ և խոտանալ է դրժել: Օհ, մի ճեղա-  
 նար իմ նոր աստուածներս, իմ հին աստուածներս  
 ինձի օտրվեցուցեր են ըլլալ միշտ պարզ և  
 անկեղծ:

Այն, իմ աստուածներ, անիկա ինձի խոտ-  
 անացաւ, ըսաւ. «ասանչւիք, բայց յուսայ՛ք, իսկ  
 չետոյ ըսաւ՝ «մոռացիր և կուրացիր»:

Ինչք, որ հիմա լսկ աստուածների աստուած-  
 ներ էք ինձի համար, անյոյս ու անխոստում,  
 և ձեր տաճարը իմ տաճարը, որ յուսախարու-  
 թեան, թախիժի ու արցունքի տաճար մը եղաւ,  
 որու դմբեթի՞ն՞ վրայ սև, մոռոյլ ու դածան մժ-  
 պերը կուտակուեր են, սեցուցեր են իմ հողիս ու  
 տաճարիս հետ, ինձի ալ սշինչ չի մնար ըսելու,  
 բայց եթէ սա քանի մը խօսքերը:

«Յիսայ որպէս ռեխտաւոր ուխտիս հետ պաշ-  
 տամունքս կատարելու Չեզի, Չեզի, որ  
 տւիք ինձ Սէդա մը, որու գերին, սարալից  
 դարձայ, որուն համար մեռցուցի իմ մէջ ետքս  
 և ամեն գգացմունք, տարեցայ անով, անար  
 չունչովը գինովցայ, մոռացայ ամեն ինչ ու այդ

մտապահութեան աշխարհին մէջ ոչ մի միտք չկար  
 խաղաղ կեանքս վրդովող, ոչ մի միտք չկար  
 ինձ տանջող, բայց եթէ այն, որ ան իմս  
 ըլլար ու ես անորը Գրկէի անոր թևերուս մէջ,  
 ծծէի շրթուներս որոնք կեանքիս աղբիւր-  
 ները պիտի ըլլային. այդ շրթուներէն կըսեմ  
 կուզէի ծծել կեանքն ու վայելքը, վայելքը  
 ոչ թէ ցեմիկ աշխարհին, այլ վայելք մը  
 երազային, ուր մարդը կը մոռնայ նիւթը, վիշտն  
 ու տառապանքը, ուր հոգին կապրի խայտանքով,  
 ուր երկու սրտերը մէկ կըլլան, մէկ գգացու-  
 մով, մէկ դատողութեամբ, ուր լեզուները ոչ թէ  
 կը խօսին, այլ կերդեն սոխակին պէս, երգը յա-  
 ւիտենական սիրոյ, այն սիրոյ, որ թևեր կու-  
 տայ մարդուն թռչելու այն աշխարհներ, ուր  
 շատ քիչերը կապրին, բայց կապրին այնպէս  
 ինչպէս կեանքն իսկ է:

Ո՛վ նոր ասուածներ, հիմա որ քար ու  
 քանդ եղաւ տաճարս, ալ տեղ չունիմ աղօթքներ-  
 քուս հետ պաշտամունքներս կատարելու. ալ  
 որին, երբ Սեդա չունիմ. ալ որին, երբ ան  
 խուչ է ու համբ, ալ որին, երբ նա դադրած է  
 զգայ ու ապրելէ այն տառապանքներով, սրտ-  
 մով ես կապրիմ”:

Ահա, իմ աստուածներ այն բանի մը կից-  
կատուք խօսքերը, որոնք ամբողջ վշտի մէկ հիւ-  
էն իսկ շեն կազմերս Բայց որո՞ւն պատմեմ իմ  
ամբողջական վշտիս պատմութիւնը, որո՞ւն  
երգեմ հոգիիս խորքերէն պատճկալ ուղող, բայց  
կատաղի ալիքներուն դէմ մաքառող մարդուն  
այէս խեղդուող հոգեմալ երգերս բոլոր, երբ  
Թախծոտ դէմքիս դէմ կը դանեմ թիծաղը և  
տառապանքիս դէմ արհամարհանքը, երբ խօսիլ  
կուզեմ՝ կը լսեցնէ:

Ձէ, ալ հերիք է, սի՛նք աստուածներ, դուք  
որ անորն էք, որ խմեց ձեր կենացը:

Ահա, ես ալ կը վերցնեմ տառա-  
պանքի բաժակը կը խմեմ միշտ հին, միշտ նոր  
աստուածներու կենացը՝ գոչելով:

«Մնաք բարով, սի՛նք աստուածներ, դուք  
որ աւելք ինձ Սէդա մը երազող կեանքիս որպէս  
հիմնադիր և այժմ բանդող: Մնաք բարով  
և դուք տաճարիս մթնալորտին մէջ ապ-  
րող բարի հոգիներ, որ քամիներու սուլումե-  
րու մէջէն կըսէիք «զգո՛յշ...»:

Մնաք բարով սի՛նք իմ ազար մուսաններ, որ  
կէս գիշերին կուգայիք ընարիս լարերուն վրայ  
Թրի՛նացնելու մարդկային լաւագոյն զգացումե-

ըը յուզող ու արցունքներ քամող երգերը, երգերը՝ փշրող կրանիդ ապառաժները: Քայց ըսէք ինձի, ո՞վ զգացուեց ձեր երգերէն, տեսա՞ք և համոզուեցի՞ք որ սրտեր կան կրանիդէն աւելի ամուր, որ շին ուղեր ապրիլ ուրիշին տառապամքներովը, թէկուզ իրենք ըլլան այդ տառապանքներուն ծնունդ աւող մայրերը:

Մնաք բարով ով իմ մուսաներ, որ կուտնը ձեր ձեռքին կռեցիք, գարբնեցիք սիրտս ու անոր անեծայուսահատ բոպէներում իսկ չի թողիք որ այն դուստնէ գիտ. սակայն ո՞վ կը հասկնայ այդ բոլորը իմ անհշ մուսաներ, չէ՞ որ այդ աները ա ն ի կ ա ցնորքի տեղ կը դնէ ու կը ծիծաղի, չէ՞ որ նա քիչ ժամանակ միայն կրցաւ ապրիլ այն աշխարհները, որոնց երագողն էի ես, իսկ անկէ վերջ... նա ձանձրացաւ այդ աշխարհներէն. հիմա անոր աշխարհները ուրիշ են, ինձի անծանօթ, ինձի անհասկանալի...

Մնաք բարով իմ մուսաներ, որ չի կրցաք պահել անոր այնպէս, ինչպէս տաղն էր: Իուք կը յիշէք, թէ ի՞նչ սրբօթեամբ կը մօտենայի անոր. կը յիշէք ինչպէս կը պաշտէի անոր իմ յուս անհեակիս խաղաղ ձ. Քնուորտին մէջ և ինչ

չէր... ինչէր... կը մտածէի անոր համար:

Ես չէր, որ անոր համար սակի երազներ հիւսեցի, ես չէր, որ անոր համար հեղեղ ար-  
ցունքներ Քափեցի տանարիս խորանին առաջ,  
անդանիս վրայ, անոր ոտքերուն տակ, բայց նա  
պատասխանեց այդ բոլորին միայն՝ հեռացի՛ր  
ու մտայիր:

Եւ այդ անքան սառն ու այնքան անասար-  
քեր:

Ո՛վ իմ մտածներ, ինչն է խաբեցիք ինձ և  
դարձուցիք հեզնանքի ու ծիծաղի սուարկա:

Մնաք բարով իմ մտածներ, Ձեզի կը  
թողու՛մ այժմ այս աւերակ ու քանդուած տա-  
նարս, անոր սուերակներուն վրայ եկէք Քառ-  
էք ողբացող բուերուն զէս ու երգեցէք, երգը  
ողբերուց, երգը աւերակներու... երգը խաբ-  
ւած սիրոյս:

Մնաք բարով և դուք իմ վաղեմի խոր-  
հուրդներս որ ծրագրեցիք և քանդեցիք:

Մնաք բարով և դուք ով իմ քաղցր Սէզա,  
որ երբեմն եկար բարի նրեշտակի նման, եղար  
ծովը յոյգերուս, փաթարկեցիք սիրտս, արիք-  
անբույժ վրայ յոյս ներշնչեցիք ինձ ու ըսիք  
որ կը ստանիս ինձ գէպի նաւահանդիսար... խա-

գաղութեան, ըսիք որ կօրորեա ինձ քաղցր ե-  
րազներու մէջ ու յետոյ կը տանիս գէպի իրա-  
կանութիւնը:

Մնաս բարով իմ Սէպա, որ ձգեցիր գրկել  
քեզ, ձգեցիր որ մեղմիկ սեղմեմ կուրծքիս վրայ,  
Ախ կողաշէ՛ր, թէ ինչե՛ր... կողաշի և ինչպէս  
կը դողաշի, երբ երակներուդ մէջէն շաշանա-  
բոյր մարմնիդ դաղջ ջերմութիւնը կանդներ  
երակներուս մէջ, մոռցնել կուտար ինձ պակիկ  
մը արցունքի աշխարհը ու անոր ծոցին մէջ  
թաղուած վիշտերն ու տառապանքները, կը  
վերանայի դէպի ուր ես ալ չեմ գիտեր, միայն  
գիտեմ որ այդ բոլորին թեկուդ վրայ, տաք շուն-  
չիդ տակ կուզէի մեանիլ, նորէն շվերագառնա-  
լու համար իմ հին աշխարհները: Կուզէի լալ,  
բայց չէի կրնար, որովհետև անուրջներուս մէջ  
կը խեղդէին արցունքներս:

Բայց աւանդ օր մը սոսկումի, երբ քեզ  
նորէն կուզէի գրկել, ինձ դէն շարտեցիր և  
դողացի սարսափիս տակ և սարսուացի, բայց  
այդ սարսուռները այն չէին, ինչ որ կողաշի  
քեզ սիրած գրկած ժամանակս: Ո՛չ, այդ սար-  
սուռներուս ատեն դէմքիդ ծալքերուն մէջ,  
աչքերդ խոր-խորութեան մէջ կը կարգայի սա



խօսցերը՝ «միամիտ խեղճ տղայ գիտցիր որ սիրածդ օղջիկ մէ. որը կը սիրէ այնքան ժամանակ մինչև որ տեսնէ թէ իր գերին սարուկն էս, իսկ անկէ վերջ կը նայի տառապանքներուդ վրայ սառ ու անտարբեր, անկ վերջ արցունքներդ կը խլէ անոնց մէջ յաղթան ա կի լողանք ընելու, անկէ վերջ կը լռէ որ դուն խօսիս մինչև սիրտդ մաշուի, անկէ վերջ երգերուդ արձագանդ չիտար, որ ձայնդ մարի, անոր հետ և դուն, որ քովէդ սուերիմը պէս հեռանայ միթէ դուն չը գիտես որ բոլոր Սէդաները, այդպէս են:

Ճիշտ է, որ նա... ծովի ծնունդ չէ, ճիշտ է որ տառապանքի աշխարհէն է ծներ, բայց քարացեր է այլևս անոր սիրտը:

Մնաս բարով իմ անուշ Սէդաս, բայց յիշէ յիշէ, որ վրդովեցիր խաղաղ կեանքս, յիշէ որ մեռած սրտիս կեանք տւիր, բայց մի մոռնար յիշել և այն, որ նիզակովդ ծակոտեցիր ամբողջ սիրտս ու դարձուցիր արիւնաքամ, մտի կտորմը կուրծքիս պատերուն տակ:

Մնաս բարով: Բայց դուք եթէ չեիր սիրելու ինչու ըսիր՝ «աանջւիր, բայց յուսած ըսէ ինչու թող տւիր որ շնչեմ տաք շունչս, միթէ չգիտէիր:

որ քու շուճչով նոր աշխարհներ պիտի ապրէի,  
միթէ չգիտէիր, որ մեռած սիրտս կեանք պիտի  
առնէր ու կրակէ սէրդ ապրէր անոր մէջ: Ըստ  
ինչու, երբ ես քեզ կըսէի սեղմիր ձեռքս որ հա-  
ւատամ թէ կը սիրես ինձ: Ըստ ինչու մեղմիկ  
և աստիճանաբար ամուր կը սեղմէիր ու ուրա-  
խութեան արձուներնով կը լեցնէիր. ոչքերս,  
ըսէ ինչու, որպէսզի այդ արջուները յետոյ  
վշտի դառնային, որպէսզի փշաքայլեր էուրիւնս  
համակ:

Մնաս բարով իմ Սէզա հող չէ իմ սիրտը  
ծով է ներող այդ դու գիտես: Հող չէ թէ դու  
ինձի աւիր տառապանքներու տառապանքը,  
վիշտերու վիշտը. հող չէ թէ դուն իմ ոչքերս  
դարձուցիր արջուների ծով:

Գիտցիր որ ես այն եմ ինչ որ էի առաջ և  
այն ալ մնալու եմ: Ես կերթամ բայց քեզ կը  
թողում պահարիս աւերակները, ասկէ վերջ ա-  
նոր բլասակներուն ասկէ փնտռէ, ապրածս հո-  
գեկան ապրումներու հետքերը, շնչէ սենեակիս  
միջուկը, որ համակ թախիծ է վիշտ ու ար-  
ցունք. յիշէ ինձ, յիշէ, որ եղաւ մէկը քեզ հասկա-  
ցող, քեզմով տունջւող քու երջանկութիւնդ ու դող  
յիշէ որ եղաւ մէկը քեզ համար լաւագոյն դգա-  
ցումներ տածող բայց հազիւ մէկ հիւլէն կըցաւ  
արտայայտելը: Մնաս բարով իմ Սէզա...

# ՎԵՐԶԱԼՈՅՍ ԷՐ

Յիշէ՛... յիշէ՛...

Օր. Լուիզ Մուլինէին

— Այն օրէն ի վեր երեք օր էր անցած, երբ հաստատապէս որոշեցի թողնել ու հեռանալ փարաւոններու երկիրը ու անոր մշտակապայտա երկիրքը:

Լուռ ու մտախոհ նստած էի սենեակս, երբ առի այդ որոշումս առանց տեսնալու Լուիզին, առանց ոչինչ ըսելու անոր, անոր՝ որուն միմչև երեք օր առաջ ամեն ինչ կըսէի, իսկ անկէ վերջ ալ ի՞նչ ըսէի և ինչո՞ւ, այդպէս կը մտածէի, բայց ներքին ձայն մը ինձի ուրիշ բան կըսէր. պայքար մը կար իմ մէջ մտածելակերպի և զգացումի. ես կապասէի որ անոնցմէ մէկն ու մէկը յաղթէր և յաղթողը՝ ինձի տար իր որոշումը: Երկար շտեմեց այդ կռիւր, զգացումներս յաղթեցին մտածելակերպիս, անոնք ինձի ըսին. «ինչ որ ալ ըլլայ, դուն պիտի տեսնես անգամ մը անոր և յայտնես քու որոշումս, այդ քայլովս միայն պիտի կրնաս հաստատել անոր առաջ այն ամենը, ինչ որ ըսեր էիր ասկէ երեք օր առաջ: Միտախոսս հանեցի փիփոս լաւ-

մը լցնելով վառեցի ու դուրս եկայ երթալու համար Գեղիբէի դիւթական այգին, հոնկէ դիտելու համար հարաւի գեղեցիկ վերջալոյսը արմաւենիներու ետեւէն:

Այդ օրը եգիպտոսի յաատւկ աշնանային գեղեցիկ օրերէն մէկն էր, իմ թեթև վերարկուս հետս էի վերցուցեր, մտածելով որ Լուսիդին կը հանդիպիմ ու երկար կը մնամ այգին:

Արեւը արդէն սկսեր էր շառագունել և յամբարայլ հեռանալ հորիզոնէն դէպի Նիւի Զուրեբուն մէջ, դէպի նոր աշխարհը՝ հոն գիշերը՝ արշալոյսի, հոս վերջալոյսի աղւոր նկարները գծելու, որոնց բիշ վերջ մութը պիտի ծածկէր իր թանձր քողին սակ այնպէս, ինչպէս թախիժը ծածկած էր իմ սիրտն ու հոգին:

Սորաասուղւած մտքերուս մէջ յամբարայլ կը յառաջանայի դէպի այգին, շուրջս ոչինչ չէի տեսնար, բացի շրթունքներուս արանքէն դուրս ելլող փիփոխ հաստ գուլաները. կզգայի որ ես ալ իմ ամբողջ էութեամբս կը գալարէի սիրտ այրող վշտերուն սակ, երբ միտքս կուգար անցեալի քաղցր օրերը ու անոնց յաշորդող երեք օր առաջ տեսածս իրականութիւնը, նորէն կուգէի ետ դառնալ, սենեակիս մէջ փակւիլ իմ նշե

քայքայույսը, մինչև նաւին սուլումը: Չտեսնե  
ոչ մի կերպ կուրծին, քայց նորէն զգացու թերս  
ինձի յաղթեցին և սարին զէպի սոաշ, ուր ես  
ինձ գտայ այգուս:

Յուշիկ ու հանդարտ քայլերով գացի այ-  
գու այն մասը ուր սովորաբար ես ու նա կողք-  
կողքի, շուշ-շուշի նստած արևի ոսկի վերջա-  
լոյսին տակ կը հիւսէինք մեր ոսկի երազները:  
Այնտեղ, ուր մեր սիրոյ խորանն էինք շիներ,  
այնտեղ ուր երեք օր սոաշ սրբապղծուեր էր:  
Այնտեղ գացի. հաւատալով որ ամ ալ հոն պի-  
տի ըլլար տեսնելու համարիք այնքան սիրած  
հարաւի աղւոր վերջալոյսը: Չէի սխալուեր, երբ  
հասայ արմաւենիներու տակ, տեսայ որ հեռուն  
խոտերուն մէջէն բարձրացող ու ծաղիկներով  
շրջապատուած արմաւենիի մը տակ նստած էր.  
երեսը ձեռքին կրթնցուցած կերպէր իր ամենէն  
աւելի սիրած երգը՝ յիշէ... յիշէ...: Անոր ա-  
նուշ ու թրթռուն ձայնի եղևիչները եկան տ-  
լեկոծեցին սիրտս. զգացի քաղցր սարսուռի մը  
հետ անուշ յուզմունք մը. կանգնած տեղս կը  
զողայի. եթէ ըլլար քովիս արմաւենին չպիտի  
կրնայի պահել ինձ կտորատուող հոգերուս վը-  
րայ: Թեալ գրի ծանոխն ու ճակատս յենեցի

անոր շրպիտի պիտնայի թէ ես կապրէի, զգացի  
և կը շնչէի, եթէ քովես անցնող զոյգի մը ձայ-  
նը՝ զհաստ մնալ անսնցմէ՝ չսթափեցնէր ինձ: Այո,  
իրաւացի էր անսնց նկատողութիւն, որովհետեւ  
այդպէս էր որ կը հաւարուէին և երգանիկ  
և դժբախտ գոյգերը, հոն էր որ կերդուէին և սի-  
րերգները և ողբերգները, հոն էր որ և կը հիւս-  
ւէին երազները և կոչնչանային:

Երբ սթափուեցի ալ երգի ձայնը շէի լսեր,  
բայց նա անստեղ էր, նոյն գիրքով նստած, ըսի  
պիտի երթամ և ըսեմ, մնաւ բարով Լուիզ ալ  
չես տեսնար ինձի: Անգամ մըն ալ լեցուցի  
փիփոսը ալ ծիւղով լսում չարժաւ չաղիւ մի  
ժամ ինձ մը մտնողս մը ճտեղատի անոր,  
յանից թէ անի անի և ինքնիքն կըսէի ՝ ինձ  
ի՞նչ ընեմ, եթէ ամ իր քով, խօսիմ հետը, թէ  
առանց նշմարելու իմ մնաւ բարովս ըսեմ ալ  
հեռանամ սուտի մը նման: Մի քանի քապէ  
այդպէս անորոշ դրութեան մէջ մնալէ վերջ  
խոշոր շունչ մը քաշեցի սրտիս վրայ հնչող  
ժանրութիւնից թեթևալու համար: յետոյ կա-  
մայց մը ձայն ալ Լուիզ... Լուիզ... ոչ մի  
ձայն և ոչ մի ակնարկ դէպի այն ծառը՝ որի  
յետևը ես կամեցնած էի, արդեօք շտեղծ իմ ձայնը

Թէ կուզէ ձեռացնել շխաժ և ինչո՞ւ կասկածիլ,  
չէ՞ որ այդ կանացի բնաւորութիւն է, չէ՞ որ  
մարդը միշտ պէտք է սարուկ ըլլայ կնոջ սէրին  
առաջ, չէ՞ որ մարդը միշտ մի աչք պիտի ու-  
նենայ կանացի թիրուխիւնները տեսնելու, չէ՞  
որ մարդուն սիրտը ծովի շափ խոր պէտք է ըլ-  
լայ կրելու և պահելու համար ամենէն ծանօթ  
միշտ ու տառապանքն իսկը Չէ, չեմ երթալու  
իր մօտ ըսի այս անգամ ալ նա պէտք է գայ  
ի՞նչ մօտ ու նորէն քիչ մը աւելի ուժեղ ձայն  
տւի Լուիզ... Լուիզ... տեսայ որ անիկա  
ցնցւեց իսկ դարձաւ նայնցաւ. ես անշարժ կանգ-  
նած էի ծխելով իմ փիփոս, նա դուրսը երկու  
ձեռքերուն մէջ առաւ. կը տեսնէի որ ուսերը  
ծովի ալիքներուն պէս մէկ կը բարձրանային  
մէկ կիջնային Կուլայ, Թէ կը ծիծաղի. մի քանի  
րոպէ ես ու նա լուռ ու անշարժ մնալէ վերջ,  
երկու քայլ ևս կը մօտենամ և կըսեմ. «Լուիզ,  
լայ կամ խնդալ, այդ երկուսը ասկէ վերջ ի՞նչի  
համար նոյնն են, ես չեմ եկեր տեսնելու ոչ քու  
լայն և ոչ ալ խնդալու այդ երկուսի վրայ ալ  
հաւատք չունիմ»։ Անիկա օտքի կլաւ, այտերու  
վրայ թափւող մօզերը իսկ ասորաւ մետաքսա-  
կիւն շղարշին տակ ծածկելու, աչքերը կար-

մրած էին այնպէս. ինչպէս կապոյտ կամարին  
վրայ շառագունած արևը, այդ վերջալոյսը պատ-  
կերացնող երկնքին շափ գեղեցիկ կերևէր հիմա  
ինձի Լուսիզք, անոր ձիւնասպիտակ դէմքին վրայ  
խոշոր սևուկ աղւոր աչքերը՝ իմ քաղցր յիշա-  
տակներու վերջալոյսը կը յիշեցնէին իրենց  
արևան կարմիր երանգներով:

Յոր ու խորհրդաւոր լուսիքներն ա խան-  
գարեց իր հեկեկանքներով, դարձաւ ինձ ու  
քսաւ ճնայէ արևին ինչպէս շառագունած է, նա-  
յէ նիլի ջուրերուն վրայ գողողոցացող աշնան  
դալուկ տերևին:

Ես ալ արևին նման կը կարմրիմ քու ա-  
ռաջ մեղքիս համար, տերևին նման կը դողդո-  
ղամ գիտնալով որ յանցաւոր եմ, բայց գի-  
տեմ որ մայր ստնող արևին պէս երկնքիս  
ճառագայիթներով նոր յոյսեր պիտի տաս սրտիս  
սպաննացող խաւարին մէջէն չէ՛:

Անյոյս մարդէն ինչ յոյսեր կսպասես, չէ՛  
որ քեզի համար յոյսի, սիրոյ ու վայելքի ծոր  
արև մնէ ծագեր ասկէ երեք օր անաջ, իսկ ես  
այն օրէն խաւարել եմ քեզի համար, խաւար-  
ել եմ ինձի համար, խաւարել է ե իմ աշխարհը  
ու ես մութին մէջ կապրիմ բայց, բայց կոյ՛թ



աչքերով. հիմա եկեր եմ քեզի բռնելու. իմ վերջին մնաս բարովը, տալու այն գրութիւնները որոնցմով իմ մէջ կառուցեր էիր երազներուս տաճարները, առ ասոնք, քանի որ այդ տաճարներդ այլևս գոյութիւն ունենալէ դադրած են, աւերակներուն մէջ չէ որ պիտի կարդամ այդ սաղմոսները, բլատակներուն վրայ չէ որ պիտի երգեմ այդ մեղեդիները. անոնց վրայ բուռի ողբերն է որ պիտի երգել, իսկ այդպիսի երգեր դուն չես կրնար հիւսել. երբ սոխակ մը ունիս դուն դեռ կրես օր առաջ բռնած, որը քեզի կերգէ նոր կեանքի, նոր յոյսերու աղւոր երգերը:

Դուն մնայ այստեղ. նոր սոխակիդ երգերը լսելու, իսկ ես կերթամ հեռու աշխարհներ փնտռելու ինձի նման լացող ու ողբերգու բու մը... մնաս բարով, անցեալիս քաղցր օրերուն Արեր, որ խաւարեցար:

— Կեցիր, ուր կերթաս, կեցիր, լսելու համար իմ վերջին խօսքը:

Փոթորկած ու յուզւած ծովու ալիքները կանգառնել չեն դիտեր. անոնք կերթան անվերջ կերթան մինչև հասնին ժայռերուն կը գարնաին ու կը փշրւին: Ծով մնէր և իմ սիրտը

անոր պէս յուզւած անոր պէս փրփրած. երևո  
թը շարունակ ապրեցայ այդ յուզմունքով մինչև  
եկայ ու հասայ քեզ մօտ, դուն ժայռն ես սէր—  
ծովիս մէջ ցցւած, սրտիս յոյզերը եկայ քու  
տուայ բանալու, փշրելու այն ամենը, ինչ որ  
քաղցր անցեալին է. վերցնելու տառապանքի  
բնոր ուսերուս հեռանալու հոսիէ, հոս փարա-  
ւոններու այս աշխարհը՝ իր մշտակապոյտ եր-  
կինքով երազներուս աշխարհ մը եղաւ ինձ հա-  
մար, որի մէջ դուն կը թագաւորես:

Ես ստրուկդ, գերիս էի դարձիր իմ ան-  
խարդախ սիրոյս երբեմնի թագուհին, դուն  
կուլանս, ինչո՞ւ, այդ արցունքներուն ես չեմ հա-  
ւատար, որովհետեւ անոնք աղի չին. որովհետեւ  
անոնց ետեր ժպիտ կայ, որ ժամ մը վերջ  
լուսնի ցոլքերուն տակ պիտի փայլի անոր...  
երեսին, ժամ մը վերջ դուն պիտի մոռնաս այս  
ժամը անոր տաք շունչին տակ, երբ կը թմրիք  
գիրկընդիտանումներուն մէջ, դուն ժամ մը վերջ  
կը մոռնաս այս տխրութեան բոպէները երբ  
ծաղիկներու ծոցին մէջ Ձեզ հովանաւորող ար-  
մաւենիներու և պանաններու սասերուն տակ  
անտո հետ կը մտնէք վայելքի աշխարհը. մի լար,  
հերիք այդ կեղծ արցունքները, մի լար որովհետեւ  
ժամ մը վերջը ինձ ալ պիտի մոռնաս...

— Իսկ դու...

Իսկ ես, ես մտապնուժի աշխարհներ շունիմ,  
եւս վայելիքի աշխարհներ շունիմ, եւս մէկ աշ-  
խարհ մը ունիմ այդ ալ վշտերու աշխարհն է, հոն  
կապրին իմ անցիակիս եւ ազուր եւ տխուր յիշա-  
տակները:

— Ուրիմն ես ալ պիտի ապրիմ այդ աշխարհի  
մէջ: Իսկն առք շունչերու. առկ միայն. կրնաս  
ապրիլ, այն տեղ ցուրտ է ու սառն, դուն ամեն  
տեղ վայելիք կը փնտռես, հոն վիշտն է միայն  
այն աշխարհը դուն չես կրնար ապրիլ, բայց քու  
յիշատակներդ պիտի ապրին ինձի հետ:

Մնաս բարով... մնաս բարով... Թող Եզիպ-

տասի մշտակապոյտ երկինքը միշտ ժպտի քեզ:  
Անոր տաքուկ արե իր ծոցի մէջ Թող պահէ  
քու նոր սէրդ որ նարէն չի սառչի. եւ յիշէ  
ինձ կեանքիս մինչև վերջի օրը: Մնաս բարով:  
Արեք արդէն մայր էր մտեր ու խաւարը իր  
սե վարագոյրը քաշեր էր կապոյտ կամարին  
վրայ, երբ ես արագ քայլերով սկսայ հեռանալ  
այգիէն: Հեռուէն դեռ կը լսէի Կուիզի մեղմա-  
նուշ ձայնը, որ մայրամուտի գեփուրը իր

Տե՛ս կը բերէր ամոր ողբի վերջին թրթռումները՝  
յիշէ՛ ... յիշէ՛ ...

Հրաժեշտս աւի և փարաւոններու երկրի այ-  
ւոր վերջալույսին ... :



# ՄԵՌԱԾ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ

Անոր...

Լաէք ինձի խորհրդաւոր սենեակիս մըթ-  
նայորտին մէջ ապրող մեռած, բայց տառապան-  
քի տակ կըած բարի հոգիներ. Ձեզի հետ է  
որ կը խօսիմ, որովհետեւ սա դժբաղդ կեանքիս  
բոլոր օրերուն մէջ միակ կայուն, հաւատա-  
րիմ և սրտակից դուք եղաք ինձի:

Ինչ որ խորհրդաւոր լռութեան մէջ մուծ  
զիշերին շրջապատեցիք ինձի, երգեցիք դաբիքի  
դժբաղդների երգը, երգը ողբի, երգը արցունքի:  
Ինչ որ աղանատես եղաք իմ արցունքներուն  
ինձի հետ լացիք ինձի հետ յուզեցիք:

Ես լսեցի Ձեր ձայնը սա բակին մէջէն ան-  
ցնող առակի կարկաչներու մէջէն, ես լսեցի  
Ձեր ձայնը պարտէզիս մէջէն վե՛ր դէպի եթեր  
բարձրացող աշնանաթափ ծառերու սօսափուն-  
ներու մէջէն. ես լսեցի Ձեր ձայնը լուսամուտէս  
ներս սուլող բամբակներու սուլումներու մէջէն որ  
ինձ կըսէիք.

«Տառապիր, որովհետեւ այդ աշխարհը ինքը  
տառապանքն է, լայց, որովհետեւ արցունքի հո-  
գիտի մէջ ես ծնեի, թող կըծուտենք ու սիրարդ,  
որովհետեւ խանձարուրդ վիշտն է եղեր, բայց

լսէ այդ բոլորի մասին նեղ մթնոլորտից մէջ,  
անոր համար որ քեզ հասկցող չի կարող ըլլալ  
այդ աշխարհին մէջ. հոս ժպիտն է, հոս ար-  
ցունքն է. հոս երջանկութիւնն է հոս վիշտն է,  
հոս կեանքն է մարմնի ու ցիւնիկ զգացումնե-  
րու, հոս տառապանքն է ու ապրումը հոգիներու.  
հոս ծովն է փրփրաղէց ալիքներու. հոս կապու-  
տակ սաւանն է հանդարտ ու խաղաղ. հոս  
հրդեհ է այրող ու լափելիցող, հոս արևէն է գաղջ  
ու տարուկ. հոս մահն է խղճաներու որովք դուն  
կը սոսկաս, հոս կեանքն է անհունին մէջ պլպլա-  
ցող աստղերուն, այդ աստղերը՝ մեռած ազնիւ  
մարդկանց, այդ անդ մարած, այստեղ փայլող  
հոգիներն են:

Այսպէս կը խօսէիր կէս դիշերին լուսեօրէն  
մէջէն դուք ինձի շէ՛: Ես որ մինչև հիմայ լուս  
մտիկ կընէի Ձեզ՝ լսէք ինչ կսեմ. նախ նայեցէք  
ոտքէս մինչև գլուխ կը տեսնէ՞ք ի՞նչպէս հիւժ-  
ւած եմ, հապա նայէք ուսերուս փայլ բարձած  
քեռին ծրարներ են անոնք անվերջանալի որոնց  
մէջ լցւած է վիշտ, տառապանք, ցաւ և արցունք:

Տեղ տւէք այդ Ձեր աշխարհին մէջ ինձի  
այ ով բարի ոգիներ, այս աշխարհի արեւը սա-  
րեթէ ինձի համար, սառն է ապրած երկիրս,

կուղեմ որ մարմինս տամ այս աշխարհի ամեն  
հողին, իսկ հողիս... անի... հողիս՝ անիկա կու-  
ղեմ Ձեզի տալ տեղ տւէք անոր այդ աստղերուն  
մէջ այս երկրին մօտիկ. մի դարմանաք իմ վեր-  
ջին առաջարկիս, որովհետեւ նա դեռ այս աշ-  
խարհին մէջ է ու կապրի: Անիկա հողիս մեծ  
մասնէ, կուղեմ աստղերու աշխարհէն լուսաւորել  
անոր մռայլ օրերը, կուղեմ եթերին մէջ լուսա-  
ւոր աստղ մը ըլլալ անոր հսկող ու երբ տես-  
նեմ որ անոր կեանքը կը խորտակի, անհունէն  
կը գահաւիժիմ անոր... հետ խորտակելու:

Տեղ տւէք ինձի Ձեր աշխարհում, հոն կու-  
ղեմ ապրիլ... մեռած, բայց ապրող կեանքովմը:















-100-

ԱԳԶ

106

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԸ

Լոյս տեսան և գանձաւումն

Ոսկէ Խնձորք և Կրտ մշակութիւնը Գ. 3 ր. 19

Երազ Օրեր

Գ. 30 ր. 19

Ետևով լոյս կը տեսնէ

Խորասկզում Յէրը

կը պատրաստուին

• Եզրիս Ալբերէն

Բրգամ էջեր իրական կեանքէ



Հեղինակի Դասցէն

Երևան՝ ջաղաք. կնք. պարինուօրման բաժանման  
բազաջէ գիւղաւանտն՝ Սոզուման Խաչատրեան